

ԲԱՐԱԿ ԵՒ ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ

(ԷՁ ՄԸ ՄԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՆՆԵՆ)

(Շար. տե'ս «Բազմավեպ», 1958, թ. 1-2, էջ 9)

2. - ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ

Բարակը ձեռք բերող եւ արարներուն յանձնողը եղաւ այս Սահլ Իպն Սնբատը։ Աճառեան իր Անճառնուհներու բառաբանին մէջ՝ թիւ 2 ՍԱՀԼԻ մասին կը գրէ։ «Որդի Սմբատ խոստովանողի, եղբայր Աշոտ Ա.ի, յաղթեց եւ բռնեց Բարան պարսիկին»։ Աճառեան նոյն գործին 36րդ Սմբատի մասին խօսած ատեն՝ զայն կը կոչէ «Առանշահիկ քաջ իշխան Աղուանից, յաղթեց Բարան պարսիկ իշխանին»։

Տարակոյս չկայ որ վերը յիշուած երկու Բարաններն ալ նոյն Բարակն է։ Աճառեան շիթութեան զոհ դացած է։ Սահլ Իպն Սնբատ էր կրնար ըլլալ եւ էր որդին Սմբատ խոստովանողին, որ Բազրատունի էր։

Կաղանկատուացի կը վկայէ որ «ի լնուլ երկերիւր եօթանասուն թուոյ հայոց (821) ելին զաղտնարար ի Պարտաւայ արք ընտիրք ի Տաճկաց եւ ի յաւարի առին զԱմարաս դաւառ՝ զերի առեալ իբրեւ ողիս

րած էր խուժիկ նետորականներու դէմ։

Ուստի յայտնի է որ Աղուանից աշխարհին մէջ ինչպէս եւ Սիւնիքի մէջ ո՛չ թէ նետորականութեան՝ այլ Քաղկեդոնի յարողներն են որ ներսէսի դռմարած ժողովքին որոշումները կը մերժեն, եւ Յովհաննէս Գաբրիելանի զրկած պատգամաւորները ձու կը ճամբեն։ Հետեւաբար եղբակացնելու է որ՝ թէեւ ներսէս կաթողիկոս Աբդիշոյի աղբեցութեան տակ որդեգրեց հակաքաղկեդոնական դերքը, բայց հայ եկեղեցւոյ մէջ եւ շուրջը եղան ընդդիմադիրներ։

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

(Շարունակելի)

հաղարս, եւ ի Մեծիրանց սահմանի ամբարացեալք՝ ի տեղւոյն որ կոչի Շիկաքար։ Յայնժամ արի եւ չքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանշահիկն տէր՝ քաջազոր եղբարբք իւրովք եւ զօրօք ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ դիմաւալ զնոսա ցիրուցան կացուցանէին, եւ որպէս յառիւծոյ ժանեաց զգրեալսն ի բաց կորդին» (էջ 374)։

Սաիլ կամ Սաիլ Սմբատեան նոյն անձերն են, որուն արար պատմիչները Սաիլ իպն Սնբատ կոչումը կու տան։ Իրապէս Սմբատի մը որդի՞ն էր այս Սահլը՝ թէ պարզապէս Սմբատեան տոհմի պատկանելուն համար իպն Սնբատ, կամ ըստ հայոց՝ Սմբատ կը կոչուէր։ Առ այժմ վերջնականապէս կարելի չէ ըսել։

Սահլի Սմբատեան կամ Սահլ Սմբատեան այսպէս կը յայտնուի 821ին։ Կաղանկատուացի զայն կը կոչէ արի եւ շքեղատեսակ, անոր քաջ եւ գեղեցկակազմ ըլլալուն համար անտարակոյս։

821ին Պարտաւի կողմէն Տաճիկներ աւարի կ'առնեն Ամարասը՝ Ախցնեաց վարանդա դաւառին մէջ (Մուղանի դաշտ), եւ ասպատակները հաղարի մօտ գերիններով Մեծիրանց սահմաններուն մէջ՝ Շիկաքարի մէջ կ'ամրանան։

Ո՞վ էին այս ասպատակները։ Կաղանկատուացի զանոնք արք ընտիրք ի Տաճկաց կը կոչէ, Պարտաւի կողմերէն։ Նախ ուրեմն անոնք Արարներն էին։ Պէտք է նշեալ որ այս Տաճիկները պարզապէս ասպատակներ էին, եւ ոչ թէ նուաճող բանակ։ Իրապէս կարելի է զանոնք նոյնապէս ի Բարակի հետեւող աղանդաւորներուն։

Բար Հերրայուս խօսելէ վերջ 829 թուի

դէպքերու մասին՝ կը գրէ. «Այս ատեն Քուրտանիէի ժողովուրդը, որոնք Մուսլիմաններ էին, ասպատակեցան Արարներուն դէմ, որովհետեւ իրենց երեւցած էր թագաւոր մը, (երկար) ատեն ակնկալուած Մահդին։ Այս մարդը իր երեսին քող մը ձգած՝ զայն ծածկելով, ինքզինքը կը կոչէր Քուրտուս եւ Սուրբ Հոգի։ Մարդոց բազմութիւն մը հաւաքուեցան իր շուրջ, եւ ան բանակաւ մը ամբարացուց Բարտէվայի երկրին լեռներուն մէջ։ Եւ նոյնիսկ Մամուն (Արարացւոց խալիֆան, Յ. Ք.) կը դողար իրմէ. եւ ան զրկեց Հասան, բանակին հրամանատարը, անոր դէմ, եւ Հասան կալանաւորեց Տուր-Արդինի մէջ, մինչ ան Կարտամինի վանքը կը կողոպտէր։ Եւ Քուրտանայանները կոտորուեցան, եւ Մահդին փախաւ Իսաակ Բար-Ահուտի, Հայուն երկիրը։ Եւ Իսաակ բռնեց զայն եւ զուլմը կտրեց»։ Յետոյ Քուրտանցիները հաւաքուեցան միասեղ դարձեալ, եւ բանակեցան Իսաակի բերդին դիմաց, մինչ ան կը պատրաստուէր դուրսը։ Եւ անոնք որ բերդին մէջ էին մեծապէս կը դողային (վախէն)։ Յետոյ երբ Իսաակի կնոջ վանական եղբայրը տեսաւ որ Քուրտանայանները բերդ մտնելու վերայ էին, նիզակ մը առաւ եւ պարիսպէն վար նետուելով, եւ ուղղակի Քուրտանայաններու գլխաւորին յառաջանալով, իր նիզակը անոր մէջ մխրձեց եւ սպանեց զայն, եւ ան գնաց (ետ) բերդին մէջ խաղաղութեամբ (այսինքն անվնաս)։ Եւ երբ զաղութեամբ (այսինքն անվնաս)։ Եւ երբ երկուց եղաւ անոնք որ բերդին մէջ էին ուրիշ յոյս չունէին բացի լալէ եւ խոնարհ կերպով Աստուծոյ աղօթելէ՝ որպէսզի ան զիրենք փրկէ։ Եւ բարեպաշտ կինը, Իսաակի կողակիցը, բոլոր զիշերը անցուց որդին, որ ծծկեր էր, Աստուծոյ յանձնելով, իր ծովին եւ արցունքով։ Եւ այն ատեն արշալոյսին Իսաակ հասաւ իր քաջ զինուորներով։ Եւ Քուրտանայանները, որոնք իրենց կռնակը դարձուցած էին փախչելու համար, արգիլուեցան ձիւնին պատճառաւ։ Եւ այս կերպով անոնց մեծազոյն մասը ընաճնջուեցան եւ սպանուեցան, եւ

քիչեր՝ որոնք ազատեցան՝ առաջնորդ մը ընտրեցին Հարուն անունով եւ Ալի զայն սպանեց։ Եւ անկէ վերջ (բարձրացաւ) Բարէկ, ջորեպան մը»։

Բար Հերրայուսի վերի վկայութեան առաջին մասը անտարակոյս կը վերաբերի Բարակի արարներէն պարտութեան, Հայաշխարհ ապստաններուն եւ Սահլէ բռնուելուն։ Սակայն նոյն այս պատմութիւնը Բար Հերրայուս, այսինքն Բարակի վախճանը, կը պատմէ իր գործին մէջ 837 տարւոյն դիմաց ըսելով. «Երբ Բարակ, խառնաղմիկ ապստամբը, տեսաւ որ իր կուսակիցները անգոր են, իր դրամները բեռցաւ (զրաստներու) եւ իր մարդոցմէն չորս հարիւրին հետ փախաւ դէպի Հոռոմաց երկիրը։ Եւ երբ Հայաստան հասաւ, որոշ ազնուական մը՝ որուն անունը Էսթէֆանա էր, զինքը շողմեց եւ զինքը իր տունը տարաւ իբր թէ անոր պատիւ ընելու, սակայն անոր քրկաթ կապանքներ զարկաւ։ Եւ երբ Մուսաղիմ իմացաւ՝ Աֆշինը, իր բանակին հրամանատարը, զրկեց Էսթէֆանային նուէրներով, եւ անոնք առին Բարակը եւ սպանեցին։ Որովհետեւ այս մարդը ընաճնջած էր աւելի քան հարիւր հազար արարական զօրքեր»։

Նախ նկատի առնենք որ 829ին Բար Հերրայուսի առաջին վկայութեան առաջին մասին պատմութիւնը կը կատարուի 829ին։ Այդ ատեն, այսինքն 829ին, աղանդաւորներուն գլխաւորը Բարակն էր՝ իբր Մահդին։ Բարակ 817էն ի վեր առաջնորդն էր աղանդաւորներուն։ Բար Հերրայուս Բարակ-Մահդին հետեւորդ աղանդաւորները նախ կը կոչէ Քուրտանայաններ, իսկ երկրորդին մէջ կը կոչէ իսկական անուամբ՝ Խառնաղմիկներ։ Սակայն տեսնենք որ Միքայէլ Ասորի ալ զանոնք Քուրտանի, Քուրտանս, եւն. ձեւով կը կոչէ։ Ուրեմն Քուրտանի, Քուրտանայէ ալ կոչուել են այս աղանդաւորները, եթէ սակայն աղբիւրը, որմէ օգտուած կ'երեւան Բար Հերրայուս եւ Միքայէլ Ասորի՝ աղաւղուած չէ Խառնաղմիկը Քուրտանի վերածուած։

Աղանդաւորներու արշաւանքներու մասին որոշ է որ Միքայէլէ եւ Բար Հերրայուսի յուսէ հասած տեղեկութիւնները աղաւաղեալ են: Մահլ Սմբատեանը (Մահլ իսկ Սնրատ) Բար Հերրայուսի մօտ Իսաակ Բար-Ահուգի վերածուելէ, որ պէտք է սրբադրել Իսահակ որդի Աշոտի: Հաւանաբար աւանդութիւնը Աշոտ Մսակերի որդի Սահակ Բագրատունիի մասին ըլլայ, անուն մը որ այլուստ ծանօթ ըլլալով Բար Հերրայուսի՝ գուցէ իր կողմէն կամ իր աղբիւրէն չփոթուած ըլլայ եւ նոյնացուած Մահլ իսկ Սնրատի հետ: Ամէն պարագայի տակ, Աշոտի որդի Սահակ մը չէ որ Մահլի-Բարակը ձերբակալեց, այլ Մահլ որդի Սմբատի, կամ աւելի ճիշտ՝ Սմբատեան էր ատիկա կատարողը:

Բար Հերրայուս եւ Միքայէլ կը հաստատեն միակ կէտ մը՝ թէ Մահլ Սմբատեան (ըստ առաջնոյն Իսաակ Բար-Ա- (շ)ուդ, իսկ երկրորդին՝ լոկ Սահակ իշխանն Հայկագուն) եղած է Մահլի-Բարակի կալանաւորողը: Թող որ Միքայէլ տարբերութիւն չի դնէր Տաճկաց եւ Քուրտանքնի միջեւ, որոնց դէմ կը կռուէր Սահակ-Մահլ:

Բար Հերրայուս եւ Միքայէլ երկուքն ալ կը վկայեն Իսահակ-Իսաակ այսինքն մեզի ծանօթ Մահլի բերդին պաշարումը եւ մանրամասնութիւններ կու տան առայդ: Այս Տաճիկ-Քուրտայեանները, նոյն Պարտաւայ արք ընտիրք ի Տաճկաց սպառազանքն են, զորս կը յիշէ 821ին Կաղանկատուացի: Այս Տաճիկները, որոնք հաւանաբար Բարակի աղանդաւորներէն էին, եւ անոր առաջին ասպատակութիւնը կատարողները հաւանաբար Հայաշխարհի սահմաններէն ներս, կ'աւարեն Մուղանի դաշտին Ամարաս գաւառը, ուր յետոյ երբեմն ասպատակեցաւ ինքն իսկ Բարակ: Ամարասի գաւառը ասպատակելէ վերջ՝ իրենց աւարով եւ հազարի մօտ զերիններով կու գան Շիկաքար (Մեծիրանց սահմաններուն մէջ), որ կ'երեւայ թէ Մահլի կը պատկանէր: Հոս ամբարացած կ'երեւան Մահլի կ'ընէր, զժրախտաբար անանուն՝

թէ՛ Միքայէլի եւ թէ՛ Բար Հերրայուսի մօտ: Մահլի անանուն կ'ընէր եւ վանական եղբայր մը քաջ, որ բերդին (Շիկաքար) պաշտպանութեան զլուխը կ'անցնէ եւ քաջութեամբ նիզակահար կը սպաննէ ասպատակներուն հրամանատարը, ըստ Բար Հերրայուսի: Մահլ կ'երեւայ թէ այլուստ զբաղած էր ասպատակներով, եւ բերդը չէր դռնուէր անոր պաշարման ժամանակ: Սակայն անմիջապէս իւր քաջագոր եղբարք եւ իրենց զօրքերով (Կաղանկատուացի) ի լուսնաւ առաւտուն (Կաղանկատուացի), կամ արշալոյսին՝ ըստ Բար Հերրայուսի, կը հասնի պաշարեալ բերդին, կը յարձակի պաշարողներուն վրայ, կը յաղթէ ու կը ցրուէ զանոնք՝ որոնցմէ զգերեալսն ի բաց կորզէին (Կաղանկատուացի): Այսպէս կարելի է համաձայնեցնել Բար Հերրայուսը Կաղանկատուացիի վկայութեան՝ իրենց մանրամասնութեանց մէջ:

Մահլի Սմբատեանն է այս ընդհարման յաղթական հերոսը՝ ըստ Կաղանկատուացիի, որ անտարակոյս անունի չփոթուեցաւ Բար Հերրայուսի քով եղեր է Իսահակ Բար Ա(շ)ուդ, այսինքն Սահակ որդի Աշոտի: Բնական է օտարի մը համար զժուար չէր Մահլը վերծանել Սահակի եւ իրեն աւելի ծանօթ Աշոտի հետ նոյնացունել: Մենք հոս պիտի գործածենք թէ՛ Սահլ հին ձեւը եւ թէ՛ աւելի վերջ արարներէն գործածուած Սահլ ձեւը:

Մահլ Սմբատեանի Կաղանկատուացիէ տրուած Եռանշահիկ կոչումը աւելի տիտղոս մըն է ժողովական: ԵՌԱՆՇԱՀԻԿ, կամ ինչպէս Հ. Ալիշան, Ալպոյաճեան կը գրեն ԱՌԱՆՇԱՀԻԿ, տիտղոս մըն էր արքունած Աղուանից արքայիկներուն: ԱՌԱՆ (ԵՌԱՆ) ԱՂՈՒԱՆԻՑ կոչումն է՝ Պարսկերէն կամ Արարերէն: ՇԱՀԻԿ նուագական է պարսկերէն ՇԱՀ, այսինքն ԱՌՔԱՅ տիտղոսին (ՇԱՀՆՇԱՀ, Արքայից արքայ):

Կաղանկատուացի շատ կանուխէն կը յիշէ «ղնախնական աղգս Հայկազնեայց զԵՌԱՆՇԱՀԻԿ» (էջ 196): Կը պատմէ որ Ե. դարուն վերջը Միհրան անուն պարսիկ

աւագ մը կը հաւնի Գարդմանաց երկրին եւ հոն կը հաստատուի՝ հիմնելով Միհրանը: Միհրան ընդմիշտ նուաճելու համար տեղական իշխանաւորները՝ անոնցմէ ի գլխաւորացն արս երկուստան կը հրաւիրէ իր մօտ դաւով եւ սրով բառնայ գնոսա եւ տիրէ աշխարհին (էջ 196): Միհրանի յաջորդներէն գաջն վարդան, որ շինեաց գրերդն Գարդմանայ գերիսաւն. եւ ի նեմգելն ի սիրտ իւր գնախնական աղգս Հայկազնեայց զԵռանշահիկ, գոր վերագոյն գրեցաք ի մատենիս՝ կոչէ որպէս ի քաշ. եւ հաջ կորստեան գործեալ տայ նոցա ուտել. եւ ի քաշի անդ արեամբ նոցա արար գլխատումն արանց վաթսնից միայն քոզոյր ի նոցանէ գիեսայացեալն իւրում ցեղին զԱրմինիս Եռանշահիկ (էջ 196-7):

Կաղանկատուացիի վկայութենէն անտարակոյս կ'երեւայ որ նախ Եռանշահիկները հին Հայկագեան ցեղ մըն էին: Աղուանից այս Հայկագեան Տէրերը վերեւայ թէ կը տիրապետէին բաւական խոշոր հողամասի մը, որուն մաս էր Գարդմանաց երկիրն ալ: Կարելի է ենթադրել որ Պարսիկ Միհրանի անձիտած երկուստան իշխանները Գարդմանայ երկրին կը պատկանէին, Հայկագեան Եռանշահիկներուն: Միհրանէն վերջ՝ իր յաջորդներէն Վարդան կ'երեւայ թէ ինքզինքը եւ իր իշխանութիւնը վտանգուած տեսաւ Հայկագեան Եռանշահիկներէն, եւ թէեւ ինք փեսայացեալ էր Արմինի Եռանշահիկի, այսուհանդերձ եւ հակառակ, իրեն տրուած ՔԱՋՆ տիտղոսին՝ Վարդան իր մօտ ճաշի կը հրաւիրէ Եռանշահիկ տոհմին 60 գլխաւորները եւ զանոնք դաւով կը սպաննէ, անտարակոյս վախճալով բացէ ի բաց անոնց դէմ մարտնչելէ: Եռանշահիկ Ամիրհն միայն կ'ազատի այս դաւադրութենէն:

Հայկազնեաց Եռանշահիկներէն դաւով սպաննուած այս 60 գլխաւորները անտարակոյս բոլորն ալ արքայիկներ չէին, այլ կը պատկանէին Աղուանից արքայական տոհմին: Այդպէս հասկցած է նաեւ Ալպոյաճեան: «Առանշահ Աղուանից թա-

ղաւոր կը նշանակէ, եւ մեր պատմիչները ցեղի վերածած են Աղուանից թաղաւորութիւնը բաղմաթիւ մասերու վերածուած տեսնելով»:

«Այս պարագային՝ Աղուանից արքայական հին տոհմը հասկնալու է»⁽¹⁰⁾:

Արմինի Եռանշահիկը անդամ մը կը յիշուի եւ ասկէ վերջ երկար ատեն Եռանշահիկի յիշատակութեան չենք հանդիպիր: Պէտք է մինչեւ Մահլ, այսինքն մինչեւ 821 թուականը դանք, որպէսզի դարձեալ հանդիպինք Եռանշահիկի:

Մահլ Սմբատեան Եռանշահիկը՝ Թուրմայ Արծրունիի քով կը յիշուի իբր «Մահլ (տարգրուած Մահլ) Սմբատայ որդի» (էջ 310): Դժբախտաբար այլուր չկրցայ հանդիպիլ Մահլի հօր անուն Սմբատ ըլլալուն: Արծրունի եւ Արար պատմիչները Մահլ որդի Սմբատի (Մահլ իսկ Սնրատ) ըսելով՝ մի գուցէ ըսել կ'ուզեն Մահլ Սմբատեան, ինչպէս որ Կաղանկատուացին կը նշանակէ: Սակայն ասիկա չի նշանակեր որդի Սմբատի, այլ Սմբատեան կոչուած ընտանեկան ճիւղէ մը:

Աղուանից վրայ Արարացուց կատարած մէկ արշաւանքին ատեն Կաղանկատուացի Սմբատ մը կը յիշատակէ 725 թուականին դիմաց: «Ի սմին ժամանակի զՋուանշիր իշխան Աղուանից սպանին Ամեթեղուքն: Եւ ի նոյն ամի մեռաւ Սմբատ Հայոց իշխանն, եւ եղեւ տարին սով խիստ, որ էր թիւ Հայոց հարիւր եօթանասուն եւ հինգ» (էջ 368): Տարակոյս չկայ որ թուականը 725 կամ 726 ըլլայ, քանի որ երկիցս այդ երեք չորս տողերուն մէջ կը կրկնուի: Ոչ ալ կարելի է այս Սմբատ Հայոց իշխանը նոյնացնել Աղուանից դուրս Հայ իշխանի մը հետ: Եւ կը խորհիմ որ մեռած Սմբատ Հայոց իշխանը՝ Եռանշահիկ Հայկագեան իշխանն էր Աղուանից Շաքէոյ եւ Մեծիրանից կողմերուն: Մահլ Սմբատեանց հաւանաբար թոռն էր այս Սմբատին, որմէ ժառանգած ըլլալու էր Սմբատեան մա-

(10) Պատմական Հայաստանի սահմանները, Գահրէ, 1950, էջ 171, ծանօթ. 1:

կանուան հետ եւ Եռանշահիկ տիրողոսը⁽¹¹⁾ :

Կաղանկատուացի շարունակողը վը դրէ. «Ստուգարանութեամբ այսպէս ծանեաք. — քնդ Հայկազնեայց արանց խնամաւորի Միհրական տոհմին, եւ պատուաստութեամբ այսուիկ զոյգ ունել ըզպետութիւն արեւելից կողմանցս Աղուանից» (էջ 386) : Ասով պէտք է հասկնալ որ Հայկազնեայց արանցը Եռանշահիկներուն համար էր, որոնք Միհրակայ տան հետ խնամխանալով՝ կերպով մը անթակայ եղան անոնց գերիշխանութեան : Միհրական տոհմին կը պատկանէր Ջուանշիր Աղուանից իշխանը որ սպաննուեցաւ 725ին, երբ այն կամ յաջորդ տարին մեռաւ Սմբատ Հայոց իշխանն ալ, որ Եռանշահիկ նկատեցի : Այս Եռանշահիկները գոնէ մեղի ծանօթ երկու ճիւղերու բաժնուած են, ինչպէս որ պիտի տեսնենք : Սմբատեան ճիւղէն զատ կար նաեւ Ստեփաննոսեան ճիւղ մը, որուն մասին իր կարգին :

Ստեփաննոսեան եւ Սմբատեան ճիւղերը արեւակցական կապէ զատ ունէին եւ խնամխան կապ : Ասիկա ալ պիտի իշխենք իր կարգին երբ Ստեփաննոսեան ճիւղին մասին խօսինք :

Ուրեմն Սահլ Սմբատեանի հօր անունը ծանօթ է⁽¹²⁾ : Մեղի ծանօթ է Սահլի մեծ հօր անունը՝ Սմբատ Հայոց իշխան, մեռած 725ին, կամ գուցէ աւելի ճիշտ՝ Սահլի հօր մեծ հայրն էր այս Սմբատը :

Մենք վերը տեսանք որ Սահլ Սմբատեան Եռանշահիկ 821ին պարտութեան մատնեց Պարտաւայ արք ընտիրք ի Տանկաց, զորս նոյնացուցի Բաբակի հետեւորդներուն մէկ խումբին հետ : Մեծիրանց եւ Շաքէոյ սահմաններուն մէջ Շիկաքար

բերդին վրայ կը յարձակին այս ասպատակները : Հոս էր որ Սահլի կինը, նորածին դաւակը, եւ կնոջ վանական եղբայրը կը դռնուէին, ինչպէս որ տեսանք վերը : Սահլի կնոջ եւ նորածին դաւակին անուանելը անծանօթ կը մնան մեղի, սակայն յետոյ պիտի տեսնենք որ Սահլի տղոցմէն մին կը կոչուէր Ատրնէրսէ : Ոչ ալ ծանօթ է Սահլի կնոջ վանական եղբոր անունը, որ քաջութեամբ բերդէն դուրս խուժեց եւ նիդակահար ըրաւ բերդը պաշարող ասպատակներուն հրամանատարը : Տեսանք նաեւ որ պաշարման յաջորդ առաւօտ Սահլ հասաւ իր պաշարուած բերդը եւ ցրուեց ասպատակները :

Մեծիրանց կամ Մեծարունիք (Մեծկունիք, Մեծունիք, Միւսհարանդ) զաւառ մըն է, մաս Արցախու եւ Աղուանից : Կը յիշուի Մեծիրանից Եպիսկոպոս մը, եւ իմացնոյ մէջ նշանաւոր փանք մըն է Մեծիրանից վանքը : Մեծիրանից զաւառի սահմանները այն ատեն գուցէ կը հասնէին Արցախի Հարանդ զաւառը, մինչեւ Ամարասի քովերը (Մուղանի դաշտ), ուր Բաբակ իրեն ասպատանարան ընտրեց երբեմն :

Թովմա Արծրունի կը վկայէ որ «Սահլ Սմբատայ որդի, Շաքէոյ տէր» (էջ 310) էր : Շաքէ (Շէքի) բուն Աղուանից հին մէկ զաւառն էր, որուն տէր էր Սահլ Սմբատեան : Շաքէ գուցէ միացած էր Մեծիրանց կամ խիստ մօտ էր : Շաքէոյ եւ Մեծիրանց սահմաններուն վրայ ըլլալու էր Շիկաքար, որ մեր արդի աշխարհագրական տեղագրական դրժերուն մէջ անծանօթ կը մնայ : Ըստ իս Շիկաքարի բերդը ըլլալու է Շաքէոյ երկու մղոն հեռու գտնուող ամրութեան մը աւերակները,

էր Աղուանից Եռանշահիկ Սմբատ իշխանին եւ որդին Սմբատի՝ Յովհաննէս եւ Սահլ որդիներէն վերջինին» (Պատմական Հայաստանի սահմանները, էջ 171-2) : Այսօրյաճեան աղբիւր ունի նշանակաւ կամ Կաղանկատուացի, Բ. էջ 69 : Սակայն այդ պատմիչին քով նման վկայութիւն չկրցայ գտնել :

զոր տեղացիք Գըզլուա (Շիկաքոյն) կը կոչեն : Բերդատեղոյն աւերակները կ'երեւին եւ կ'արժէ որ հոն պեղումներ կատարուէին մեր պատմութեան այս էջը աւելի լուսաւորուելու համար :



Անանուն Արարական ժամանակադրական հատակոտոր մը կը վկայէ որ Սահլ որդին էր Ստեփաննոսի քրոջ : Ստեփաննոս՝ Եռանշահիկներու միւս ճիւղէն էր : Սահլի ծննդեան թուականը ծանօթ է : Գիտենք թէ ողջ էր 852ին, եւ եթէ մեռաւ՝ բնական չէր իր մահուան պատճառը, քանի որ 852ին Բուղան ուրիշ հայ իշխաններու հետ Սամարայ աքսորեց զինքը : Գիտենք նաեւ որ 821ին արդէն քաջակորով ասպետ մըն էր, ամուսնացած եւ նորածին զաւակի մըն ալ տէր : Գուցէ կարելի է զինքը 790ական թիւերուն ծնած նկատել :

821էն վերջ դարձեալ կը դժուարանանք հետեւելու Սահլի կեանքին : Մակղիսի Արար պատմիչը կը վկայէ որ «Սահլ կալանաւորուած էր Բաբակէն, եւ վերջինս անոր ներկայութեամբ իսկ բռնաբարած էր իր (Սահլի) մայրը, քոյրը եւ կիներ» : Ասիկա ահարկու եւ անհերքելի ոճի մըն էր տոհմիկ Հայ իշխանի մը դէմ կատարուած եւ բնական է որ Սահլ երբեք պիտի չներէր Բաբակին :

Փնտռենք թէ ե'րբ վրնար կատարուած ըլլալ Սահլի Բաբակէն կալանաւորուելը :

Կաղանկատուացի պաշտօնագէտ Բաբակի Հայադուանք եւ Միւսիք մտնելը կը նշանակէ 821ին : «Ի նոյն ամի ասպատակեաց Սեւադայ՝ աշխարհաւերն Տաճիկ, որոյ Աւառանշան անուն ճանաչէր, ի սահմանս Հայոց եւ յաւարի առեալ զաշխարհն ամենայն դառնայ ի Սիւնիս, եւ ամբանայ ի Բերդատեղի աւանին Շաղատու, որ է ի զաւառին Միւսիք : Եւ Վասակ Սիւնեաց տէր ածեալ զԲաբան ի Պարսից՝ Կհար ըզնոսա եւ արար փախստական. եւ Սիւնեաց տէրն, ի նմին ամի վախճանեցաւ. եւ հառ

Բաբան զդուստրն Վասակայ Սիւնեաց տեառն ի կնութիւն» (էջ 374-5) :

Բաբակ այսպէս տիրացաւ Սիւնեաց Վասակի երկիրներուն. հաւանաբար դէպքերու շարքով 822ին Բաբակ տէր դարձաւ երկրին : Սակայն կ'երեւի թէ Սիւնիք հանդարտօրէն չենթարկուեցաւ այս օտար բռնակալութեան : Միայն այս ատեն Բաբակ կրնար Սահլը կալանաւորել եւ ընտանիքը պղծել : Կաղանկատուացի կը շարունակէ պատմելով. Յետ այսորիկ անհրամանակատար եղեւ զաւառն Բաղաց՝ յանօրէն Բաբանայ. եւ Ել նա ի Պարսից եւ էտ առ աւերեաց զերկիրն եւ ի սուր սուսերի հարկ զկանայս եւ զմանկունս Բաղաց : Եւ անտի ի միւս տարին հանց Բաբան ի զաւառն Գեղարքունի եւ հարկ ի սուր զքնակիւն ողիս իրբեւ տաան եւ հինգ հազար, եւ զմեծ Մաքենացուց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն ջրաղացն եւ այլ ոչ ինչ. եւ էր թիւն Հայոց երկու հարիւր եօթնասուն եւ վեց» (Կաղանկատուացի, էջ 375 եւ Օրբէլեան) :

Բաբակ Սիւնեաց տիրելէ վերջ՝ կ'երեւի թէ Ատրպատական քաղաքացաւ : Սակայն Սիւնեցիք հանդարտ չմնացին եւ բմբոստացան : Բաբակ վերադարձաւ եւ Բաղաց զաւառը եւ Գեղարքունիքը աւարի եւ կոտորածի ենթարկեց, տասնեակ հազարներ բնակչութենէն առ հասարակ սրախողխող ընելով : Քանդեց նոյնիսկ Մաքենացուց մայրավանքը որ Կաղանկատուացիէ մայրաքաղաք կոչուած կը գտնենք : Բաբակ արաւարար վանականները երկու խումբերով կրնան փախչիլ ու ազատիլ : Կաղանկատուացի 827ը վը հասցնէ կատարուած աւերումներուն թուականը :

Հաւանաբար կարճ ժամանակ մը արեւնաշաղախ խաղաղութիւն մը տիրեց Սիւնեաց աշխարհին : Սակայն յաջորդ տարին, 829ին, ալ-Մամուն Բաբակի դէմ զրկեց մեծ արաբական բանակ մը՝ հրամանատարութեամբ Մուհամատ իպն Հիւմայիտ ալ-Տուսին (Կաղանկատուացիի Տաւուսը) :

Ասկէ հաւանաբար քաջաբերուած՝ նոր

(11) Հ. Ալիշան Սիսականի մէջ, էջ 15, Սմբատ Առանշահիկ մը կը յիշէ, որուն կը վերագրէ սակայն Բաբակի կալանաւորումը : Որոշ է որ Հ. Ալիշան վրիպակի մը ենթակայ է եւ Սահլ Սմբատեան Եռանշահիկը նշանակած է Սմբատ Առանշահիկ :

(12) Այսօրյաճեան կը գրէ. Ատրնէրսէ «թոն

ապստամբութիւն մը կը սկսի Սիւնեաց մէջ: Կաղանկատուացի կը զրէ. «Եւ յետ երկուց ամաց (829-30) Կհար Բաբան ըզ-Տաւուսին եւ հալածական արար անձինս իբրեւ հարիւր եւ յետեւ հաղար: Եւ ի միւսում տարին եհար Բաբան զԱրբաշիմ զորդին Ղեթայ (Իպրահիմ իսն ալ-Այալէն): Ի նմին ամի դաւաճանողքն ի սէր եւ ի խաղաղութիւն, որոց անուանք Դաւոն եւ Շապուհ ճանաչէր, սպանին զՍտեփաննոս զկոչեցեալն Արլասադ, որ էաճն զԲաբան եւ Կհար զԲաղաղիսն» (էջ 375-6):

Դաւոն եւ Շապուհ ապստամբութիւնը կը սկսին նախ վրէժ առնելով Բաղաց դաւառի կոտորման՝ Բաբակին օժանդակ Ստեփաննոս զկոչեցեալն Արլասադը սպաննելով: Պիտի տեսնենք որ այս Ստեփաննոս - Արլասադը Եռանշահիկ տոհմէն էր: Բաբակի առաջնորդը եղած կը թուի Բաղասական դաւառի ապստամբութիւնը ճզմելու ատեն, որմէ վերջ Գեղարքունիքն ալ զոհ դնաց Բաբակի կատաղութեան:

Կարելի է խորհիլ որ Բաբակ Սիւնեաց իշխանութեան տիրանալէ վերջ՝ չփտահեցաւ Սիւնեաց իշխանազուններուն որ երկիրը իր բացակայութեան ատեն կառավարեն, եւ խիստ հաւանաբար Եռանշահիկ Ստեփաննոսեաններուն յանձնեց իշխանութիւնը: Երբ Բաբակի բացակայութեան՝ Բաղաց դաւառ, Գեղարքունիք ապստամբեցան, Արլասադ Բաբակի միացած ճզմեց ապստամբութիւնը: Արդ երբ Բաբակ ըստիպուեցաւ վերադառնալ Արարական բանակներուն դէմ՝ այն ատեն ապստամբութիւնը վերստին ծայր տուաւ առաջնորդութեամբ Դաւո (Դաւիթ) եւ Շապուհ զօրավարներու: Ապստամբները սպաննեցին Արլասադը, ի սուր նիզակաց կոտորեցին զԲեքնոս գաւառ եւ գաւառն Զուռեաց գկառնակաշ, գՀակարի եւ գՏափատ: Ասոնք, հաւանաբար, Բերձոր դաւառի ամբողջութեամբ, կը պատկանէին Ստեփաննոսեան Եռանշահիկներուն:

Կաղանկատուացի կը շարունակէ. «Եւ դարձեալ ապստամբքն ի Բաբանայ զիմա-

դարձ պատերազմաւ ամրացան ի բերդն Գորոզու, կալեալ զգաւառսն ամս տասն եւ երկու, որք են այսոքիկ՝ Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պաղկանք, Մխանք, եւ Տրի դաւառ» (էջ 376):

Հոս ամս տասն եւ երկու տկներեւ սըխալ կ'երեւի եւ հաւանաբար պէտք է սըրբազրել ամիս տասն եւ երկու:

Ապստամբները կ'երեւի տարի մը տէր կը մնան երկրին: Բաբակ յաջողած էր արարական բանակները պարտութեան մատնել եւ վերստին իր ուշադրութիւնը դարձուցած էր Սիւնեաց վրայ: Կաղանկատուացի կը վկայէ. «Յետ այնորիկ զսպանողան Արլասադայ վալեալ մերձաւորացն՝ չարաչար կործանեցին: Եւ Յիսայի անուանեալն Աբու Մուսէ՝ այր խաղաղութեան, քեռորդի Արլասադայ՝ ըմբռնեալ զգաւառսն՝ իշխանացաւ ամենայնի: Եւ ի նոյն ամին էանց Բաբան զդէտովն Երասխ ի Պարսից, եւ յԱմարաս դաւառ բնակեցաւ. բան խաղաղութեան սկըսաւ խօսել, զի ի հնազանդութիւն նմա եկեցեան, եւ զժամադիւտ զղջամբ ոմանք հնազանդեցան եւ յետոյ դաւեալք անհնազանդ եղին: Անտի դարձեալ Բաբանայ յերկիր իւր ի Պարսս յԱտրպատական՝ Եթող զօրավար ոմն Ռոստոմ հանդերձ զօրօք, եւ ետ նմա հրաման ոչ պատերազմիլ ընդ բերդին (Գորոզու, Յ. Բ.), այլ ի սէր համակել, զի հնազանդեցին: Իսկ Ռոստոմայ անփոյթ արարեալ զպատուէրն Բաբանայ՝ եւ տալ պատերազմ ընդ ամրացելոցն ի բերդին: Յայնժամ ապաւինեալ բերդեցեացն ի զօրութիւնն Քրիստոսի՝ զխաչս եւ զսրբոց նշխարս ընդդէմ բերեալ՝ ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական զունդն, եւ զերծեալ յայնմանէ զՔրիստոս փառաւորէին՝ զոհանալով զնմանէ» (էջ 376-7):

Դժբախտաբար ոչ մէկ տկներութիւն կայ հոս թէ Բաբակ ե՞րբ կալանաւորեց Սահլ Սմբատեանը: Երբ Բաբակ Բաղաց եւ Գեղարքունեաց ապստամբութիւնը կը ճզմէր իրեն զօրծակից կը զոնենք Ստե-

փաննոսեան Արլասադ Եռանշահիկը: Ուրեմն հաւանական է որ այդ ատեն Բաբակ կալանաւորած ըլլայ Արլասադի աղբական Սահլ Սմբատեանը: Ոչ ալ Սահլի կը հանդիպինք Դաւոյի եւ Շապուհի առաջնորդած ապստամբութեան մասնակցողներուն մէջ: Դաւոյ եւ Շապուհ՝ Արլասադը ըստ պաննելէ վերջ իրենք ալ Արլասադի մերձաւորներուն ձեռքը կ'իյնան եւ կը սպանուին: Գորոզի բերդին մէջ ապստամբած միւս Սիւնեցի ապստամբները Դաւոյի եւ Շապուհի սպանութենէն ալ վերջ կը շարունակեն Բաբակի դէմ իրենց ըմբռնութիւնը: Բաբակ թէեւ Ամարաս (Մուղան) կու դայ ձմերելու, սակայն կ'երեւի թէ արարական յաջորդական բանակներուն դէմ իր մարտնչման համար խոհեմութիւն չի սեպեր Սիւնեցիք ալ աւելի զըրգոել եւ կը ջանայ խաղաղութեամբ շահիլ ապստամբները: Եսայի-Աբու Մուսէ, որ յաջորդեց Արլասադի եւ անոր քեռորդին էր, մասնակից էր Երեւելի Գորոզու բերդին, ապստամբները նուաճելու գործին, եւ պատմիչը կը վկայէ որ ապստամբներուն զրաւած դաւառները վերստին զրաւեց եւ տիրեց անոնց ու այլ խաղաղութեան էր:

Դէպքերը ժամանակագրական վերադրվ կը հաւասարին 831ին: Հաւանական է որ Կաղանկատուացի չյիշէ Սահլի կալանաւորութիւնը Բաբակէն, գոնէ մինչեւ 831: Իսկ այս թուականէն վերջ Սահլ ալ իր կարգին Արարացուց դէմ ապստամբ կ'երեւի եւ անհաւանական Բաբակէն կալանաւորութիւնը:

Արդարեւ 835ին Հայտար պին Կառու, որ ալ-Աֆշին կը կոչուէր, ալ-Մուսադիմ իշխի՞թայէն Հայաստանի կառավարիչ նըշանակուեցաւ: Բեկադորի արար պատմիչը կը վկայէ որ «Իշխան Սահլ Ի. Սմբատ յարձակեցաւ Հայդար Ի. Կառու Օֆշինի՝ Հայաստանի կառավարչի վերայ եւ սպաննեց սորա քարտուղարին, որ փչեց հոգին»⁽¹³⁾:

Ետզուպի իր կարգին կը պատմէ 233 Հիճրէթի թուին դիմաց. «Օշին՝ Ատրպատական վերադառնալով՝ զրեց Սամարբանդցի Մուհամէդ Ի. Սուլէյման Աղդին»

Հայաստանի վերայ կառավարիչ, որ զնաց իւր պաշտօնատեղը: Սահլ Ի. Սմբատ, որ ապստամբել էր Աղուանքում եւ տիրել դաւառին, այստեղ միասին զիջերելիս հալածեց նորան»⁽¹⁴⁾:

Ալ-Աֆշին տարի մը միայն Հայաստանի կառավարիչ եղաւ, 835ին, երբ կ'երեւի թէ զժողով Եռանշահիկ տոհմին Բաբակի հետ ունեցած զինակցութենէն՝ նեղած էր հարկով կամ այլապէս Աղուանից իշխանները, որոնց դէմ զրկած ըլլալու է իր քարտուղարը, որ անանուն կը մնայ: Սահլ ընդդիմացած ալ-Աֆշինի պահանջներուն՝ կ'ըմբոստանայ եւ կը սպաննէ քարտուղարը: Յաջորդ տարին ալ-Աֆշին կը հեռանայ Հայաստանի կառավարչութենէն եւ հրամանատար կը կարգուի Բաբակի դէմ պատրաստուած արարական մեծ բանակին: Տարարի կը վկայէ որ ալ-Աֆշին Բաբակի դէմ իր բանակը պատրաստելու պիտի էր 835 Յունիս 3ին: Ուրեմն ընդհանրապէս ընդունուած 835 թուականը ալ-Աֆշինի Հայաստանի կառավարչութեան եւ Սահլի ապստամբութեան՝ պէտք է սրբազրել:

835ին ալ-Աֆշին անցաւ իր բանակով Ատրպատական՝ Բաբակի դէմ զինուորական գործողութիւնները կազմակերպելու եւ տկներու համար: Ասկէ է որ ալ-Աֆշին ըստ Բեկադորի 233 թուին Սմբատացի Մուհամէդ իսկ Սիւլէյման Աղդին Հայաստան զրկեց իբր կառավարիչ: Տրուած 233 թուականը Հիճրէթի թուական է եւ կը հաւասարի մեր 837-8 թուականին: Այս թուականին էր որ վերջնականապէս պարտուեցաւ Բաբակ եւ Սահլ ձերբակալուելով յանձնուեցաւ ալ-Աֆշինի: Ուրեմն պէտք է խորհիլ որ Բաբակի պարտութենէն քիչ առաջ Սմբատացին զրկուեցաւ Հայաստան: Սակայն նախ խնդիր է որ Բաղրատ իշխանից կրցա՞ծ է Բեկադո-

(13) Արարացի մատենագիրներ Հայաստանի մասին: Թարգ. Բաղրատ իշխանից: Վիեննա, 1919, էջ 64:

(14) Անդ, էջ 120:

բիլի այդ հատուածը ճիշտ թարգմանել: Խալաթեանց կը թարգմանէ. «Սահլ Ի. Սմբատ, որ ապստամբել էր Աղուանքում եւ տիրել դաւառին, այստեղ միասին գիշերելիս հալածեց նորան»: Մանաւանդ վերջին մասը իմաստ չունի:

Հաւանական է որ ալ-Աֆշինի Հայաստանի կառավարչութեան շրջանին Սահլ ըմբոստացաւ ալ-Աֆշինի պահանջներուն դէմ, եւ նոյնիսկ սպանեց վերջնոյն քարտուղարը: Սահլի ապստամբութեան դէմ բան մը չկրցան ընել արաբները, որովհետեւ ստիպողաբար զբաղած էին Բաբելը նուաճելու անյետաճգելի հարցով եւ հարկ չկար արդէն նեղի դրուած խալիֆայութիւնը այլուր ալ զբաղեցնելու: Երբ ալ-Աֆշին մեծ բանակով մը Ատրպատական զրկուեցաւ Բաբելի դէմ, ըստ երեւոյթի ալ-Աֆշին Սմբատացին Հայաստանի կառավարիչ զրկեց, այս առթիւ հրահանգելով որ խաղաղական միջոցներով շահի Սիւնեաց եւ Աղուանից հայ իշխանները, այդպէսով Բաբելը իր ձեռքէն փախչելու կարելիութիւնը նուազեցնելով: Այդ առթիւ հաւանաբար Սահլի ներուեցաւ իր ըմբոստութիւնը եւ ճանչցուեցաւ իր իշխանութիւնը: Ալ-Աֆշինի այդ ընթացքը արդարեւ պողալից եղաւ եւ Բաբել Սահլէ ձերբակալեալ յանձնուեցաւ ալ-Աֆշինի:



Այս աշխատութեան սկիզբը տեսանք թէ ինչպէս Բաբել ձերբակալուեցաւ Սահլէ, երբ, ան, Բաբել, իբր թէ Բիւզանդիոն փախչելու համար Սահլի երկրին սահմաններէն կ'անցնէր:

Կարելի է չխորհիլ որ ալ-Աֆշին արդէն պայմանաւորուած էր Սահլի հետ, Բաբելը անոր մօտ ապաստանելուն՝ բռնելու եւ իրեն յանձնելու: Ատոր համար ալ-Աֆշին գուցէ խալիֆայութեան համար ներեց Սահլի նախկին ըմբոստութիւնը եւ ճանչցաւ անոր իշխանութիւնը:

(15) Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին, էջ 119:

Սահլ երբ կը ջանայ համոզել Բաբելը որ ընդունի իր հիւրասիրութիւնը, մենք հոն չենք հանդիպիր որեւէ ակնարկութեան Սահլի Բաբելէ կալանաւորուած ըլլալուն, որուն կը վկայէ Մակեդիսի: Ոչ մէկ խօսք Բաբելի կողմէ Սահլի մօր, կընտրել եւ քրոջ բռնաբարութիւնը: Արդարեւ զարմանալի է որ Տաբարի իր տուած հափաղանց մանրամասնութեանց մէջ չի յիշեր նման պատահար, եթէ իրապէս տեղի ունեցած ըլլար:

Ըստ իս՝ Սահլ Բաբելը դաւով ձերբակալեց, որովհետեւ Սահլ Բաբելեան մը չէր, ինչպէս էր ազգական Աբլասադ Ստեփանեանը: Սահլ տեսաւ որ Բաբել այլեւս սպառնալիք մը չէր: Յետոյ Արաբները ներած էին իր ըմբոստութեան, ճանչցած իր իշխանութիւնը. եւ Բաբելը անոնց յանձնելով նախ չարք բարձած կ'ըլլար Սիւնեաց եւ Աղուանից վրայէն, վրէժ առած կ'ըլլար Մեծիրանաց եւ Շաքեոյ (Շիկաքարի) վրայ Բաբելեանց ասպատակութեանց, վրէժ առած կ'ըլլար նաեւ Բաբելի կառարած նախնիներուն Բաղասականի եւ Գեղարքունիքի մէջ:

Եւզուպի կը գրէ 222 թուին դիմաց (837). «Օչին գրեց Հայոց եւ Ատրպատականի իշխաններին՝ որոնք Բաբելին, խոստանալով 1,000,000 դրամ նորան, ով նորան (Բաբելը իւր մօտ) բերէ: Բաբել զնաց իշխաններից մէկի մօտ, որ Սահլ Ի. Սմբատ կը կոչուէր. վերջինս ձերբակալեց նորան եւ տեղեկացրեց Օչինին այս բանի մասին»⁽¹⁵⁾: Մասնաւոր ալ կը վկայէ որ «Բաբանը բռնելու համար, Սահլ ստացաւ պատուոյ պատմութեան, թագ մը եւ ձի մը, եւ ստացած է զբաժանական պարգէլ: Անոր զարձուցած է հարկը եւ ստացած է մէկ միլիոն տրախմի»⁽¹⁶⁾:



Եռանշահիկ տոհմը ինքն իր մէջ ալ դաւեր, սպանութիւններ ունեցած է: Կաղան-

(16) Պատմական Հայաստանի սահմանները, էջ 172:

կատուացի կը պատմէ որ Միւրեան-Եռանշահիկ (Հայկազինա) խոսնուող տոհմէն սերած Վարազ Պերոժ ունեցաւ յաջորդներ՝ որոնցմէ էր Վարազ Տրդատ, Վարդան, Ներսէս: Ներսէս, 853ին Բուղայէն Սամարա աքսորուած Հայ իշխաններուն մէջ էր, սակայն երբ «անցանէր զՀաղիւն զիւղ մօտանել յԱսորիս եւ լինէր օրն կիւրակէ: Նա մեկեկեալ յընկերացն միայն դարձաւ» (էջ 387): Ներսէս, որ անշուշտ նոյնն է Արծրունի ցանկին Ներսէս իշխան Գարաթայանի հետ (էջ 310), վաղ մը կ'ապաստանի եւ երկար ատեն կը մնայ անանուն: Ներսէսի որդի կը յիշուի Գազիկ, եւ Գազկայ որդի Ստեփաննոս եւ Ապրամեն քոյրը: Ասկէ տարբեր է Ներսէսի Փիլիպեան որ կը յիշուի Կաղանկատուացի եւ իր շարունակողէն երկու անգամ: Նախ էջ 375, ուր կ'ըսէ. «Եւ ի նոյն ամի տէր Ներսէս ի փղիպեան (պէտք է ըլլայ Փղիպեան)՝ սպան զՎարազ Տրդատ ի Ստեփաննոսեան, եւ զորդի նորին ի մօրն զոգ զենին եւ զամենայն ստացուածս նորա յափշտակեցին»:

Ի նոյն ամի՝ հոս Վասակ Սիւնիի մեռնելուն եւ Բաբելի անոր աղջկան հետ ամուսնանալուն համար է, 821-22ի ատենները, հաւանաբար:

Կաղանկատուացիի շարունակողը կը կրկնէ ասիկա աւելի մանրամասնութեամբ. «Ձայս Վարազ Տրդատ (Միհրեան-Եռանշահիկ) եւ զորդի նորա Ստեփաննոս, Ներսէս ի Փիլիպեան՝ ազգակից նորա սպան ի միում ժամու ի խորաձորն՝ որ կոչի Դադոյի վանք: Ապա յայն աղետիցն զառն զբեցեալ զարուսթիւն կնոջն սպանելոյն՝ առեալ զմնացեալ իւր գուտարըն Սպրամ գիշերահէն տաժանելի ուղեւորմամբ՝ մօտանէ ի բերդն Խաչենոյ՝ եւ բարուօք խորհեալ տան իւրում՝ ամուսնացուցանէ զՍպրամ ընդ Ատրնեքսէի՝ Սահլի որդւոյ, որ էր ի Տոհակայ եւ տէր Սիւնեաց եւ բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ. եւ որդի նորա Ատրնեքսէ հանդիպեցաւ կնոջ զգաւառի, որք երկիւղածք յԱստուծոյ եւ բարեպաշտք

զիւրեանց ցուցանէին զկեանս եւ աշխարհի քաղցունք» (էջ 388-9):

Այս երկու իրար ամբողջացնող վկայութեանց համաձայն կը տեսնենք որ Դադոյի վանքին, այժմ ծանօթ իբր Դադի վանք (Խոթայ վանք) Աղուանից, այսինքն ամուսնանալու կողմը դաւառին, խորունկ ձորի մը մէջ Վարազ Տրդատ, իր կինը եւ նորածին որդին Ստեփաննոսը յարձակման կ'ենթարկուին Փիլիպեան Ներսէսէ: Վարազ Տրդատ կը սպանուի, ինչպէս նաեւ իր մանկիկ Ստեփաննոս որդին, նոյնիսկ իր մօր գրկին մէջ: Վարազ Տրդատի կինը եւ Սպրամ գուտարը հաղիւ կ'ազատին եւ զիշերով փախստական՝ մեծ նեղութեամբ կ'ապաստանին բերդն Խաչենոյ: Հոն կ'ամուսնացնէ իր Սպրամ գուտարը Սահլի որդի Ատրնեքսէի հետ:

Այս յիշատակութեան մէջ կը յիշուի որ Սահլ (Սմբատեան) տէր էր եղած՝ Սիւնեաց եւ կը տիրապետէր Գեղամայ դաւառին: Ասիկա անշուշտ պատահեցաւ Բաբելի այդ կողմերը ասպատակելէն յետոյ: Սահլի համար կ'ըսուի նաեւ որ էր ի Տոհակայ: Ինծի կարելի է հղաւ գտնել վայրս:

Այսպէս Սահլի յաջորդ եւ որդի ունինք Ատրնեքսէ, որ ամուսնացած էր Վարազ Տրդատի աղջկան՝ Սպրամի հետ: Կաղանկատուացիի շարունակողը երկար կը խօսի Ատրնեքսէի մասին ըսելով. «Սա Ատրնեքսէ շինէ զբերդն Հանդու, եւ զապարանս իւր զնէ ի գիւղն, որ կոչի Վայուներք, ուր եւ բաղանիք եւ արքունական» (էջ 389):

Վայուներք կամ Վայկունիք Արցախի մէջ էր, Գեղարքունեաց Ծար աւանին մօտ: Հոս էր Հանդուբերդ կամ Հանդաբերդ:

Թովմա Արծրունի կը վկայէ որ Բուղայի կողմէ 853ին Սամառայ աքսորուած հայ իշխաններուն մէջ էր «Մահլ (Սահլ) Սըմբատայ որդի, Շաքեոյ տէր, որ զբաբանն (սրբագրէ գեղարանն) կալաւ»: Իսկ ասկէ քիչ առաջ նոյն ցանկին մէջ կը յիշէ «Ատրնեքսէ Աղուանից իշխանն» (էջ 310),

առանց յիշելու որ Ատրնեբսեհ որդին էր Սահլ Սմբատեանի: Կաղանկատուացի շարունակողը կը վկայէ որ «զնա (Ատրնեբսեհը) տարան ընդ այլ իշխանս յերկիրն Պարսից. եւ կալով նորա անդ ամս բազումս տիկինն Սպրամ յառաւել բարեկործութիւնս յաճախէր. եւ մեծածախ տենչմամբ շինէր զնորապանս ի դաւառին Սոդէից ամենապայծառ զարդուք: Եւ իսկոյն դայր Ատրնեբսեհ զերծեալ ի կողմանցն Տաճկաց. եւ խաղաղութեամբ զառժամայն լուծանէ կեանս» (էջ 389):

Ակնարկութիւնը Բուղայի աքսորին մասին է, երբ Սահլ եւ իր որդին Ատրնեբսեհ ուրիշ հայ իշխաններու հետ Սամարա աքսորուեցան 853ին: Մինչ ինք աքսորուած էր՝ իր տիկինը Սպրամ կը զբաղէր շինարարութեամբ: Յայտնի է թէ որն է Սպրամի շինած գնորավանս ի գաւառին Սոդէից:

Ատրնեբսեհի աքսորը, կալով նորա անդամս բազումս, չի կրնար հինգ տարիէն աւելի ըլլալ: Ստեփաննոս Օրբէլեան՝ Տաթեւի սահմանաց մասին վճռադրի մը ստորագրողներուն շարքին կը յիշէ նաեւ «Մեք Գրիգոր եւ Եսայի եւ Ատրնեբսեհ՝ Աղվանից իշխանք, վկայ եմք այսմ վճռի» (էջ 234): Ան կու տայ եւ թուականը Հայոց 355 կամ մեր 906ը: Ուրեմն զերեւարձէն՝ 858էն՝ զրեթէ յետուն տարի վերջ դեռ ողջ էր Ատրնեբսեհ:

Սահլի դարձին մասին վկայութիւն չը կայ: Պէտք է խորհիլ որ ան աքսորի մէջ մահացաւ: Իր իշխանութեան գլուխը անցաւ Ատրնեբսեհ, որ 906ին դեռ ողջ էր եւ խաղաղութեան մէջ մեռաւ:

Ատրնեբսեհի որդիներուն համար Կաղանկատուացի շարունակողը կը վկայէ. «Լինին սորա (Ատրնեբսեհի) որդիք Գրիգոր եւ Ապուսէթ. Գրիգոր շինէ զՀաւախաղացի բերդն, եւ յայն կողմն ձգէ զձեռն իւրոյ իշխանութեանն» (էջ 389): Հաւախաղացի այժմ կը նոյնացուի Սագսըղամ-գալէսի հետ եւ կը գտնուի Մեծիրանից վանքին շրջան: Պատմիչը կը շարունակէ. «Եւ Գրիգորի լինին որդիք

հինգ, յորոց երէց որդին Ապուսէթ սպանի յաղակցէն Սմբատայ» (անդ): Ապուսէթ սպանութեան մասին ինքն Կաղանկատուացին ալ կը վկայէ ըսելով. «Իսկ յետ չորից ամաց, յորում տարեմուտն ի սրբումն հանդիպէր Պասեղին. օր. սպանանի Պօլի (նոյն Ապուսէթի հետ: Յ. Բ.) Աղուանից իշխանն Հայկաղուն (այսինքն Եռանշահիկ, Յ. Բ.) յիւրմէ հարազատէ ի Սմբատայ. եւ եղեւ այն սուղ մեծ իւրայնոց զարմից» (էջ 383):

Ապուսէթ սպանութիւնը կատարուած է յետ չորից ամաց՝ այսինքն չորս տարի վերջ Գրիգոր Գառնեցի կաթողիկոսին ձերբակալութենէն (արարներէն) եւ աղատութենէն վերջ, մօտաւորապէս 893-4 թուականին: Ասկէ չորս տարի վերջ կ'ունենանք 897-8 թուականը, որ պատմիչին համաձայն Ապուսէթ սպանութեան թուականն է՝ իր տոհմէն կամ հարազատէն Սմբատէ իսկ կատարուած:

Ապուսէթ եղբայրը կամ Գրիգորի «միւս որդին Սահակ, որ եւ Սեւադայ կոչեցաւ, այր քաջ եւ յաջող, սա առհասարակ տիրեաց Գարդմանայ եւ Քաւսայ եւ Փառնայ դաւառաց, այլ եւ աւաղակապետաց Զորոգետոյն բովանդակ եղեւ իշխան, եւ ինքորդ իսկ զբաղիտութեան. եւ զըզրապետս ի տան իւրում կարգեաց. ընդ որում եւ բազմաջան հնարիւք թագաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ ոչ ինչ կարաց ստերիւրել զնա ի կամս իւր: Սեւադայ ծնանի զերկուս որդիս՝ զԳրիգոր եւ զԴաւիթ. Գրիգոր ծնանի զՍեւադայ, որոյ իշխան անուն կոչիւր, եւ զԱտրնեբսեհ եւ զՓիլիպպէ: Իսկ զերէց որդին իշխանին (Սեւադայի) զՅովհաննէս, որ եւ Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց աջն Բարձրելոյն՝ կոչելով զնա ի թագաւորութիւն. եւ զվաղնջուց խափանեալ թագաւորութիւն Տէրն ամենակալ ի ձեռն նորա նորոգեաց, զոր եւ թագաւորն Պարսից մեծամեծ զարդուք պատուէ եւ տայ նմա զթագ հօր (Սահակ-Սեւադա) եւ զնորին երկվարն: Ի նմին ամի եւ որ Յունացն էր Մագիր-

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

(Շար. տես «Բազմավեպ» 1958, թ. 1-2, էջ 1)

8. — Աշտանակ. — Հինէն ի վեր ծանօթ էր Յոյներու եւ Արեւմուտցիներու, եւ Դ. դարէն ընդունուեցաւ եկեղեցւոյ մէջ եւս. այնպէս որ Կոստանդիանոս կայսրն առնոցմէ նուիրեց սուրբ տեղերուն՝ ոսկեղէն եւ արծաթեղէն. եւ ատոնց վրայ մոմեր կը վառէին, ինչպէս կ'երեւի եւ հին նկարներու մէջ: Եթերիա՝ Երուսաղէմի Յարութեան ու Խաչի տաճարներուն մէջ ալ կը տեսնէր «բազում մոմակալս» (Հեքստիար. 514), որ էին հին աշտանակներ: Նոյններն ընտանի էին Հայերուն ալ, եւ Աղաթանդեղոս յիշեց Դ. դարուն Հովսիսիմեանց վկայութիւններու մէջ «եւ աշտանակօք բորբոքելովք»: Տեսանք ասելի

տրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագաւորմանապան եւ ծիրանիս թագաւորական առաքել ի պատիւ եւ ի զօլեստ աստուածայաջող առն այնորիկ, որ եւ ի ձեռն հայրապետական աջոյն առնոյր զօծումն թագաւորական ի փառս Քրիստոսի» (էջ 389-90):

Նպատակ չունենալով մխրճուիլ այս իշխաններուն տոմարագրութեան մէջ՝ հոս այսքանով կը բաւականանանք: Միայն յիշենք որ Յովհաննէս-Սենեքերիմ մեռաւ 1003ին եւ կը յիշուի իբր քաղաւոր Փառխաւի:

Գալով Սահակ (Սեւադայ)ի մասին, պատմիչը կը դրուատէ անոր զբաղիտութիւնը եւ մատենասիրութիւնը: Այս Սահակը յաղթուեցաւ Աշոտ Երկաթէն եւ 923ին կուրցուցին զինքը:

Յ. ՔԻՐՏԵԱՆ

(Շարունակելի)

ուշ Ն. Լամբրոնացիի յիշած «աշտանակս լուսոյ», որ կրնայ նաեւ գործածուած ըլլալ մոմիսականին աղբեցութեամբ, որուն հետ կը համեմատէ մերը, եւ ակնարկել բոլոր լուսատու անօթներու. թէպէտ կային դեռ իր օրով իրական աշտանակներ եւս, որոնցմէ նկարուած կը տեսնենք իր վերոյիշեալ աւետարանին զարդախորաններուն մէջ՝ զոյգ զոյգ, մին՝ մէկ, եւ միւսը՝ միւս կողմէն: Նոյնպէս եւ Նիկ. Մառ Անիի մէջ գտաւ «երկու պղնձեայ կռածոյ շարժական աշտանակներ»⁽³³⁾: Արդ զանազան աշտանակներ կը վառէին եկեղեցւոյ խորանէն դուրս, ինչպէս նկատեցինք:

Բայց կար անոնցմէ մէկը եւ խորանին մէջ, բարձրը մշտապէս լոյսին՝ որուն ակնարկեցինք, եւ որ մեծագոյն կարեւորութիւն ունէր: Յիշուած է Յ. Ոսկերեւանէն, որ նկարագրելով խորանին կազմածը, եւ համեմատելով աշխարհական տուններու հետ, ասելի պատուական կը գտնէ «աշտանակս քան զաշտանակն» (յն. լիւքնիա, ճրագակալ) որ կար ուրիշ տուներու մէջ. եւ անոր վրայ փոխանակ մոմեղէնի՝ զրուած էր ճրագ մը, որու «իւղով» հաւատացեալները կ'օծուէին՝ բժշկութիւն գտնելու համար (Մտթ. Ա., 495): Ըստ տեղւոյն ու նպատակին՝ կը յիշեցնէ մովսիսականը, «զիցեա զաշտանակն յանդիման սեղանոյն՝ ի կողմանէ խորանին ընդ հարաւ» (Եւր., Ի2, 35): Իսկ ըստ յօրինուածին՝ Մատթէոսի առակաւոր աշտանակը. «Ոչ լուցանեն նրազ եւ դնեն ընդ դրուանաւ, այլ ի վերայ աշտանակի» (Ե. 15). այսինքն մէկ ճրագ՝ փոխան մովսիս-

(33) Արարատ հնդ. 1911, 662: